

Հոկտեմբեր 31, 1978

Մեծայարգ
Տիար Սուրեն Էրվան
Քորոնթոյի մէջ կազմուելիք
Երկրորդ ծուխի աշխատանքներով
Զբաղող Յանձնախումբի Ատենապետ
Քորոնթօ.

Յարգելի Տիար Էրվան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Յանձնախումբիդ կողմէ
պատրաստուած անուանացանկը եւ քարտէսը, որոնց համար կը
յայտնէ իր շնորհակալութիւնը եւ գնահատանքը:

Մօտիկ ապագային նորին Սրբազնութիւնը պիտի նշանակէ Երկ-
րորդ ծուխին համար Կազմակերպիչ Յանձնախումբ մը, որ կազմա-
կերպչական օրինական եւ նախնական աշխատանքներուն հետամուտ
պիտի ըլլայ:

Կը մաղթենք որ Տէրը Յանձնախումբիդ ննդամներուն պարգեւէ
ուժ եւ կարողութիւն, եւ ձեր եկեղեցանուէր ու ազգանուէր
զործներուն յաջողութիւն:

Աղօթարար

Յուսիկ Ե. Վրդ. Պաղտասեան
Առաջնորդի Փոխանորդ